ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 lusinmat001@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2022 թվականի թիվ 26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՌՆՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ 2.77482 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու» կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 258 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կառնուտ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոխոխությունը, համաձայն որի նախատեսվում է՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի հունիսի 1-ի թիվ 834-Ա հրամանով Հայաստանի սպառողական կոոպերատիվներիմիության <<Ախուրյանի կոոպշին>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման և /կամ/ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման 01.06.2021 թ. N ՇԱԹ-29/651 թույլտվության, 01.06.2021 թ. NL-651 լեռնհատկացման ակտով և օգտակար հանածոյի արդյունահանման և /կամ/ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով 01.06.2021 թ.

N Պ-651 ընդերքօգտագործման պայմանագրի համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում գտնվող /բնակավայր՝ Կառնուտ/ անդեզիտների հանքավայրի անդեզիտաբազալտների <<Կառնուտ-1>> տեղամասում բաց եղանակով, 50 տարի ժամկետով անդեզիտաբազալտի արդյունահանման աշխատանքներ իրականացնելու նպատակով նախատեսված (ընդերքօգտագործման պետական գրանցման վկայական՝ 11.10.1995թ. N 55.070.00108) 08-053-0124- կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող ընդամենը 2.77482 հեկտար համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտ հողատեսքի երեք կտոր հողամասերը /2.74879, 0.01400, 0.01203 հեկտար/ փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակություն՝ ընկերության կողմից այդ հողամասում անդեզիտաբազալտի արդյունահանում իրականացնելու նպատակով հողամասը վարձակալելու և հողի նպատակային ու գործառնական նշանակությանը համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար՝ Արծրունի Իգիթյանին.

1) Հողամասի նպատակային նշանակության սույն որոշմն 1-ին կետով նախատեսված փոփոխությամբ պայմանավորված ապահովել հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը,

2)հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -27 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՅՎԱԶՅԱՆ

Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ

Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

Վ. ԱՐՇԱԿՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Կ. ԷԼԲԱԿՅԱՆ

Ա. ԻԳԻԹՅԱՆ

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Մ. ՄԱԹՈՍՅԱՆ

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Մ. ՄՆԱՑՅԱՆ

Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Հ. ՆԱՎՈՅԱՆ

Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հ. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. ՍԵՐԳՈՅԱՆ

Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

18 փետրվարի 2022թվական
գյուղ Ախուրյան